ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-2-2

ք. Երևան 19.07.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ա. Թառոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, ՀՀ ՊՆ ՌԱԿ զինվորական ներկայացուցչության բաժնի կողմից տված

եզրակացության հիման վրա, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից (5) հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գումարը, կազմում է 32 000 000/երեսուներկու միլիոն/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է՝ 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Հ. Հակոբյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500707770077
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00001672
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱԼ	Տնօրեն
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ	Ա. ԹԱՌՈՅԱՆ

Գ/Գ հմ. 003168002

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ.	Տեխնիկական բնութագիրը
1.	Վարժաարքերի նորոգման ծառայություններ (Նշանակետ, Նշանակետ-ՄՄ, Վրիժառու վարժասարքերի նորոգում)	դրամ	Համաձայն վարժասարքերի շահագործման ձեռնարկի պահանջների, վարժասարքերի աշխատունակության լիովին ապահովում՝ նորոգել (անհրաժեշտության դեպքում փոխարինել) ԱԿ-74 ինքնաձիգով, ԴԴՀ դիպուկահար հրացանով, ՁՀՆ-7 նռնականետով հրաձգություն վարելու ուսուցման համար նախատեսված <Նշանակետ>, <Նշանակետ-ՄՄ> և <Վրիժառու> վարժասարքերի անսարք սարքերը և հանգույցները:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Անվանումը	Չափման միավոր	քանակ	Առավելագույն գումար	Ծառայության մատուցումը 2019թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ 10.12.2019թ.
Նշանակետ, Նշանակետ-ՄՄ և Վրիժառու վարժասարքերի նորոգում	դրամ	1	32 000 000	ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացրած հայտերի

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գին (ՀՀ դրամ)
Համակարգչային բլոկ			
Այդ թվում՝			
1	Համակարգչային բլոկ	հատ	195,000
2	Սնուցման բլոկի վերանորոգում	հատ	11,130
3	Սնուցման բլոկ	հատ	10,500
4	Մայր սալիկ	հատ	28,000
5	HDD վինչեստր	հատ	30,000
6	Օպերատիվ հիշողություն	հատ	17,000
7	DVD-RW	հատ	16,000
8	Տեսաքարտ	հատ	30,000
9	Ստեղնաշար	հատ	3,000
10	Մկնիկ	հատ	3,000
Անխափան սնուցման սարք UPS			
Այդ թվում՝			
11	Անխափան սնուցման սարք	հատ	37,500
12	Մարտկոց 12Վ 7.2 Ա (2 հատ)	հատ	16,000
A4 Ֆորմատի տպիչ սարք			
Այդ թվում՝			
13	Տպիչ սարք	հատ	49,000
14	Տպիչ սարքի թմբուկ	հատ	1,860
15	Տպիչ սարքի փոշի	հատ	920
16	Մոնիտոր 19՝ LCD	հատ	39,000
17	Ակուստիկ համակարգ	հատ	16,500
USB-COM կերպարափոխիչ			
Այդ թվում՝			
18	USB-COM կերպարափոխիչ	հատ	10,500
Թվային ընդունող սարք (ԹԸՍ)			
Այդ թվում՝			
19	Թվային ընդունող սարք	հատ	180,000
20	Օպտիկական	հատ	80,000
Արտապատկերման սարք (ԱՍ)			
Այդ թվում՝			
21	Արտապատկերման սարք	հատ	298,000
22	ԱՍ-ի լամպ	հատ	84,000
Ուժեղացուցիչ բաշխիչ սարք			
Այդ թվում՝			
23	Ուժեղացուցիչ բաշխիչ սարք	հատ	23,000
24	Օդասեղմիչ	հատ	58,000
AK-74 և ԴԴՀ նմանակիչ			
Այդ թվում՝			

25	Էլեկտրամագնիսական փականի պատրաստման համար անհրաժեշտ նյութեր	հատ	6,000
26	Լազերային մոդուլ	հատ	26,800
27	Օպտիկական զույգի հանգույց պատրաստման համար անհրաժեշտ նյութեր	հատ	10,000
Հրազենների նմանակիչների սնուցման բլոկ			
Այդ թվում՝			
28	Ղեկավարող տպասալիկի փոխարինման համար անհրաժեշտ նյութեր	հատ	40,000
29	TAH-I-220 տրանսֆորմատոր	հատ	8,600
«ՁՀՆ-7» նմանակիչ			
Այդ թվում՝			
30	Լազերային մոդուլ	հատ	26,800
31	Ղեկավարող տպասալիկ	հատ	39,800
32	3DPRO ջոստիկ	հատ	38,000
33	3,7 V-800MA կուտակիչ մարտկոց	հատ	5,040
34	5VIA լիցքավորման սարք	հատ	3,000
35	Լիցքավորման ընիկ	հատ	600
36	Լուսադիոդ	հատ	960
37	Լեթիավաք	հատ	19,800
Կրոնշտեյն			
Այդ թվում՝			
38	Ճշտադրման մեխանիզմ	հատ	16,500
Պատի էկրան			
Այդ թվում՝			
39	Պատի էկրան	հատ	102,000
Նորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների ցանկ			
Հ/հ	**Ապրանքի անվանումը**	**Չափման միավորը**	**Գին (ՀՀ դրամ)**
Համակարգչային բլոկ			
Այդ թվում՝			
40	Համակարգչային բլոկի ծրագրային ապահովում	հատ	62,160
41	Սնուցման բլոկի վերանորոգում	հատ	11,130
42	Սնուցման բլոկի փոխարինում	հատ	4,200
43	Մայր սալիկի փոխարինում	հատ	33,200
44	HDD վինչեստերի փոխարինում	հատ	33,630
45	Օպերատիվ հիշողության փոխարինում	հատ	29,500
46	DVD-RW-ի փոխարինում	հատ	29,180
47	Տեսաքարտի փոխարինում	հատ	33,630
48	Ստեղնաշարի փոխարինում	հատ	960
49	Մկնիկի փոխարինում	հատ	960
Անխափան սնուցման սարք UPS			
Այդ թվում՝			
50	Անխափան սնուցման սարքի փոխարինում	հատ	12,000
51	Մարտկոց 12Վ 7.2 Ա (2 հատ) փոխարինում	հատ	9,650
A4 Ֆորմատի տպիչ սարք			
Այդ թվում՝			
52	Տպիչ սարքի փոխարինում	հատ	15,680
53	Տպիչ սարքի թմբուկի փոխարինում	հատ	4,380
54	Տպիչ սարքի փոշու լիցքավորում	հատ	6,760
55	Մոնիտոր 19՝ LCD -ի փոխարինում	հատ	12,460
56	Վիդեոտիպ համակարգի փոխարինում	հատ	5,280
USB-COM կերպարափոխիչ			
Այդ թվում՝			
57	USB-COM կերպարափոխիչի փոխարինում	հատ	20,970
58	USB-COM Կերպարափոխիչի վերանորոգում	հատ	7,200
Թվային ընդունող սարք (ԹԸՍ)			
Այդ թվում՝			
59	ԹԸՍ-ի սնուցման տպասալիկի վերանորոգում	հատ	36,960
60	ԹԸՍ-ի ղեկավարող տպասալիկի վերանորոգում	հատ	36,960
61	ԹԸՍ-ի փոխարինում	հատ	216,000
62	Օբյեկտիվի փոխարինում	հատ	15,580
Արտապատկերման սարք (ԱՍ)			
Այդ թվում՝			
63	ԱՍ-ի փոխարինում	հատ	95,360
64	ԱՍ-ի սնուցման բլոկի վերանորոգում	հատ	36,000
65	ԱՍ-ի լամպի փոխարինում	հատ	11,820
Ուժեղացուցիչ բաշխիչ սարք			
Այդ թվում՝			
66	Ուժեղացուցիչ բաշխիչ սարքի փոխարինում	հատ	7,360
67	Օդաբեռմիջի վերանորոգում	հատ	61,290
68	Օդաբեռմիջի փոխարինում	հատ	18,560
АК-74 և ԴԴՀ նմանակիչ			
Այդ թվում՝			
69	Էլեկտրամագնիսական փականի պատրաստում և փոխարինում	հատ	48,150

70	Լազերային մոդուլի փոխարինում	հատ	56,660
71	Օպտիկական ջոյսթի հանգույցի պատրաստում և փոխարինում	հատ	38,750
72	Մեխանիկական անսարքությունների վերացում	հատ	4,080
Հրազենների նմանակիչների սնուցման բլոկ			
Այդ թվում՝			
73	Ղեկավարող տպասալիկի պատրաստում և փոխարինում	հատ	31,280
74	Ղեկավարվող տպասալիկի վերանորոգում	հատ	53,640
75	TAH-1-220 տրանսֆորմատորի փոխարինում	հատ	8,350
«ՁՀՆ-7» նմանակիչ			
Այդ թվում՝			
76	Լազերային մոդուլի փոխարինում	հատ	56,660
77	Ղեկավարող տպասալիկի փոխարինում	հատ	106,600
78	Ղեկավարող տպասալիկի վերանորոգում	հատ	43,920
79	3DPRO ջոստիկի փոխարինում	հատ	1,600
80	3,7 V 800MA կուտակիչ մարտկոցի փոխարինում	հատ	13,020
81	5V1A լիցքավորման սարքի փոխարինում	հատ	1,200
82	Լիցքավորման բնիկի փոխարինում	հատ	8,700
83	Լուսադիոդի փոխարինում	հատ	9,600
84	Ներկապատում	հատ	21,060
85	Ալեհավաքի փոխարինում	հատ	2,640
86	Ակտիվացիոն վերանորոգում	հատ	22,080
87	Մեխանիկական անսարքությունների վերացում	հատ	4,140
Կրոնշտեյն			
Այդ թվում՝			
88	Ճշտադրման մեխանիզմի փոխարինում	հատ	2,520
Պատի էկրան			
Այդ թվում՝			
89	Պատի էկրանի փոխարինում	հատ	6,000
Այլ ծախսեր			
Այդ թվում՝			
90	Վերանորոգման ենթակա բաղադրիչ մասի ընդունում, անսարքության թեսթավորում, փաստաթղթային ձևակերպում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	24,750
91	Վերանորոգված բաղադրիչ մասի ստուգում, ստենդի կազմում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	34,890
92	Մեկ միավոր վարժասարքի ընդունում, փաստաթղթավորում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	31,950
93	Բաղադրիչ մասերի անսարքության թեսթավորում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում, վերանորոգման նախնական արժեքի հաշվարկում, փաստաթղթավորում և համաձայնեցում	հատ	108,300
94	Ծրագրային ապահովման վերականգնում և ստուգում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	62,160
95	Համալիրի բացազատում և մոնտաժ «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	54,240
96	Լարք (ճշտադրում, կոորդինատների համակցում (калибровка), նշանափորձում) «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	48,090
97	Վարժասարքի համալիր կարգաբերում և հանձնում պատվիրատուի ներակայացուցչին«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	72,420
98	Վերանորոգված համալիրի փաթեթավորում	հատ	24,750
99	Համալիրի բացազատում,տեղադրում և մոնտաժ շահագործման վայրում	հատ	62,700
100	Վարժասարքի համալիր կարգաբերում շահագործման վայրում	հատ	65,220
101	Լարք (ճշտադրում,կոորդինատների համակցում (калибровка), նշանափորձում) շահագործման վայրում	հատ	78,300
102	Նորոգված վարժասարքի հանձնում շահագործման վայրում	հատ	62,640
103	Ծրագրային ապահովման վերականգնում և ստուգում շահագործման վայրում	հատ	91,800
104	Բաղադրիչ մասերի անսարքության թեսթավորում շահագործման վայրում	հատ	180,000
105	Ուխտագում շահագործման վայրում	հատ	33,120
ԸՆԴԱՄԵՆԸ՝			**4,026,630**

Մանրամասնություն:

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումն իրականացվում է ՀՈՒ ՄՊՎ հայտերի համաձայն, կազմակերպության արտադրամասում կամ վաժասարքի շահագործման վայրում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ... ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ

ՏՆՕՐԵՆ

Ա. ԹԱՌՈՅԱՆ

Ք/Ք կնք. 00316800 2

Հավելված № 2
№ ՄԱԾՁԲ-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV-ի կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Վարժաարքների նորոգման ծառայություններ (Նշանակետ. Նշանակետ-ՄՄ, Վրիժառու վարժաարքերի նորոգում)	50871100/3	16000000	16000000	16000000	32000000	32000000	32000000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԵՐՄԱԳՀԻ» ՓԲԸ

ՏՆՕՐԵՆ

Ա. ԹԱՌՈՅԱՆ

Հ/Հ
Գ/Գ հ/հ. 00316800 2

Հավելված N 3
ՄԱԾՁԲ-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
ՄԱԾՔ-2-2ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARM AUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

N 07/142
20.04.2018թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԹԱՌՈՅԱՆ ԱՐՄԵՆ ՀԵԿՏՈՐԻ
«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տնօրեն
Հասցե՝ ք.Երևան, Հ.Հակոբյան 3
Հեռ. +374 10 27-69-71, +374 91409296
Անձնագիր՝ AM 0434414,004,25.08.2011թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ Ա.Թառոյանի կողմից ներկայացված՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՆՇԱՆԱԿԵՏ", "ՆՇԱՆԱԿԵՏ-ՄՄ" ("ՄԵՆԱՄԱՐՏ") ՎԱՐԺԱՄԱՐՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ /ՏՎԻՍ.467854.004/ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

անվանումով համակարգչային ծրագրերը ի պահ են վերցված կազմակերպությունում 2018թ. ապրիլի 18-ին 08/4485 թվի ներքո:

«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Թառոյանի հավաստում է որ ինքը հանդիսանում է վերոնշյալ ծրագրերի նկատմամբ իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ.65-69/:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. +374 52 63 93, Հեռ/Ֆաքս. + 374 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 63 93 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 63 93 Tel/ Fax: + 374 1 52 94 92
http://www.armauthor.am e-mail: international@armauthor.am

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARM AUTHOR"
Non-governmental collective management organization of copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

N 07/169
16.05.2018թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԹԱՌՈՅԱՆ ԱՐՄԵՆ ՀԵԿՏՈՐԻ
«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տնօրեն
Հասցե՝ ք.Երևան, Հ.Հակոբյան 3
Հեռ. +374 10 27-69-71, +374 91409296
Անձնագիր՝ AM 0434414,004,25.08.2011թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ Ա.Թառոյանի կողմից ներկայացված՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՎՐԻԺԱՌՈՒ" ՎԱՐԺԱՍԱՐՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ /ՏՎԻՍ.467854.008/ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

անվանումով համակարգչային ծրագրերը ի պահ են վերցված կազմակերպությունում 2018թ. մայիսի 15 –ին 08/ 4511 թվի ներքո:

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա.Թառոյանի հավաստում է որ ինքը հանդիսանում է վերոնշյալ ծրագրերի նկատմամբ իրավատերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ.65-69/:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ.՝ +374 52 63 93, Հեռ/Ֆաքս. + 374 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел.: +374 1 52 63 93 Факс: +374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 63 93 Tel/ Fax: + 374 1 52 94 92
http://www.armauthor.am e-mail: international@armauthor.am